ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 48

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի ԹԻՎ 45 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ 3-ՐԴ ԿԵՏԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Մալիշկա համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 1-ի թիվ 45 որոշման 3-րդ կետը շարադրել ստորև նշված նոր խմբագրությամբ՝

3.Տարեկան վարձավճարը սահմանել 3500/երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, որը կազմում է հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափի 2800%:Պայմանագիրը կնքման պահին 0.03331 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է՝125/հարյուր քսան հինգ/ հհ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

20 20 թ. Հուլիս 10
գ.Մալիշկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 49

ՄԱԼԻՇԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ՝ ԷԴԻԿ ՀՈՒՍԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ՄԻՋև ԿՆՔՎԱԾ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ՝ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՐՈՒՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 619-րդ հոդվածի 2-րդ մասի,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի,Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգնաձորի նոտարական գրասենյակի կողմից տրված 613-20200622-84-4592086 և 613-20200622-84-4592204 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Մալիշկայի համայնքապետարանի և Մալիշկա համայնքի բնակիչ հանգուցյալ էդիկ Հուսիկի Սողոմոնյանի միջև 20.03.2002թ 25 տարի ժամկետով կնքված հողամասի վարձակալության պայմանագրի <<չայլաղ>><<գետի ձախ մասում>> ընդամենը՝1300 քառ.մ. մակերեսով(տրված թիվ 0026933՝ 1000ք.մ. և թիվ 00226934՝ 300քմ. անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայականով) մնացած 6 տարի 8 ամիս ժամանակաշրջանը մինչև պայմանագրի ավարտը շարունակել և կնքել պայմանագիր հանգուցյալ՝էդիկ Սողոմոնյանի ժառանգներ՝ Սամվել Սողոմոնյանի /ծնվ.06.02.1977թ/ և Արման Սողոմոնյանի/ծնվ.26.02.1981թ/ հետ:

2.Տարեկան վարձավճարը թողնել անփոփոխ՝նույնը տարեկան 1800/մեկ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

3.Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 25-ը:Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

20<u>20</u> թ. <u>Հուլիսի</u> <u>14</u>
գ.Մալիշկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 50

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ 1.43559 ՀԱ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մալիշկա համայնքի ավագանու 16 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 77 որոշումը, Մալիշկա համայնքի ղեկավարը

ՈՐՈՇՈՒՄ Է

ԼՈՏ 1

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 1.43559հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0221-0879 նպատակային նշանակությունը գյուղատնտեսական,գործառնական նշանակությունը՝այլ հողատեսք) հողամասը աճուրդով օտարել:Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 300%-ի չափով 269173(երկու հարյուր վաթսուն ինները հազար հարյուր յոթանասուն երեք) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

20 20 թ. Հուլիս 16
գ.Մալիշկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 51

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մալիշկա համայնքի ավագանու 24.06.2020թ թիվ 33 որոշումը,Մալիշկա համայնքի ղեկավարը

ՈՐՈՇՈՒՄ է

Մալիշկա համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից տրամադրել վարձակալության

Հողավանդակ N1

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.23162 հա (կադաստրային ծածկագիրը՝10-032-0294-004, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝արոտավայր) հողամասը մրցույթով,25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 2500(երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Հողավանդակ N2

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.27533 հա(կադաստրային ծածկագիրը՝10-032-0256-0008, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող)հողամասը մրցույթով,25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ:Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 2500(երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Հողավանդակ N3

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.21497հա(կադաստրային ծածկագիրը՝10-032-0281-0004, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող)հողամասը մրցույթով,25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ:Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 4500(չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Հողավանդակ N4

Մալիշկա համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0.16043հա(կադաստրային ծածկագիրը՝10-032-0274-0064, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող)հողամասը մրցույթով,25 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ:Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս՝ 3000(երեք հազար) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

20<u>20</u> թ. <u>Հուլիս</u> <u>16</u>
գ.Մալիշկա